

ըողութեանս ներած համեստ սահմանին մէջ՝ աշխատակցելով միշտ, հնար եղած չափով, Պատուիրակութեան արժանընտիր նախագահ Վսեմ. Պօղոս Նուպար փառային: Նուիրական պարտք կը համարեմ սակայն ըսել այս առթիւ թէ՛ իրականին մէջ Ն. Վսեմութեան անհատական բարձր կարողութեանց ու անխոնջ ջանից շնորհիւ է՝ որ կարելի եղաւ Պատուիրակութեան, որքան որ հնար էր, ի պղծիս հանել Ձեր Վեհափառութեան հրահանգները: . . .»

Մեծի պահոց իւրաքանչիւր կիւրակէ երեկոյեան Վարդաշապատի եկեղեցում հերթով քարոզ խօսելու համար Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ նշանակուած են Տ. Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեան, Աշոտ, Կարապետ, Մատթէոս եպիսկոպոսներ և Մեսրոպ վարդապետ. իսկ շրջակայ գիւղերի համար Արիստակէս վարդապետ:

Ճեմարանում ուսանողների և աշակերտների պարամունքներն ընթանում են խաղաղ: Յաճախ երաժշտական երեկոյթներ են լինում ուսուցիչ պ. Արշակ Տէր Յովսէփեանի ղեկավարութեամբ: Այդ երեկոյթները անցնում են յաջող և դառնում օգտակար՝ աշակերտութեան մէջ բուռն սէր առաջ բերելով դէպի երաժշտութիւնը:

Մայր Տանուր

Ի նկատի առնելով ս. Էջմիածնի Տաճարի վերանորոգութեան շուրջը պարբերական մամուլում վերջերս ծագած տարաձայնութիւնները՝ մենք այստեղ բերում ենք ս. Էջմիածնի վերանորոգութեան կենդրոնական մասնաժողովի և Թիֆլիսի մասնաժողովի ճարտարապետ անդամներէ կազմած արձանագրութիւնը՝ պարզելու եղած թիւրիմացութիւնները:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 և 15 սեպտեմբերի 1914 թ. էջմիածնի վերանորոգութեան թիֆլիսի մասնաժողովից ընտրած ենթամասնաժողովի միջոցով կատարուած է քննութիւն, սրան կցուած նկարի վրայ ցոյց տուած տարածութեան վրայ ձեփը և ներկը վերացնելու գործի:

Երեք հատ փոքր աշտարակների սիւնների վրայից հանած ներկի շերտի հաստութիւնը: Չափելու հետեանքը. հարաւային աշտարակի մաքրուած մէկ սիւնի շրջապատի երկարութիւնը ստուգուած է բարձրութեան վրայ երեք տեղ և դուրս եկաւ մի չափսի=0,495 ս.:

Հիւսիսային աշտարակի սիւններից մէկի չափսերը մէջտեղում ցոյց տուեցին հետեանալը. մաքրուածի շրջապատի երկարութիւնը=405/4 դմ., իսկ չը մաքրուած մասի՝ միևնոյն սիւնի =41 դմ.:

Հիւսիսային աշտարակի մէկ սիւնի շրջապատի երկարութիւնը՝ ներկուածի=0,4935, իսկ մաքրուածի=0,485 ս.:

Հարաւային աշտարակից ներկը հանելուց յետոյ երեան եկան առաջին կամարի կապերը խախտուած, նոյնը և նրա վերև գրտնուղ պատի: Այդ պատճառով առաջին երկու սիւնները նոյն կամարի գլխին բաժանուած են իրանց խոյակներից և մնում են կախուած:

Կնետրօնական գմբէթի զլանի պատուհանների արխիվօլտների գլխից ձեփը շերտը հեռացնելուց յետոյ երեան եկան փորուած արձանագրութիւններ և բլբլէֆ խաչեր: Ոչնչացրած արձանագրութիւնների ծագած հարցի նկատմամբ ենթամասնաժողովը չը գտաւ ոչ մի հետք, բայց ի նկատի ունենալով այս հարցի լրջութիւնը՝ նա բացի իր եզրակացութիւնից կցում է նաև էկզպերտների կայացրած ակտը: էկզպերտների կարծիքը միանգամայն համաձայն է ենթամասնաժողովի կարծիքի հետ:

Կարնիզների տակ գտնուող բլբլէֆ բոզեակաները, որոնք առաջ ծածկուած էին իւղաներկով, այժմ մաքրուած են մեծ խնամքով՝ պահպանելով լիակատար իրենց բլբլէֆը: Ինչ կը վերաբերի մեղալիծներին, որոնք ներկայացնում են առաքեալներին, մնացել են անձեռնմխելի, այսինքն ձեփը և նրա վրայ պօլիխրօմիան մնում են նախկին դրութեան մէջ, բացի արտաքին հարթ շրջանակների երեք մէղալիծների վրայ:

Գլխաւոր գմբէթի զլանի վրայ գտնուող ուրբուած կիսասիւնները ձեփը հեռացնելուց յետոյ, երևաց որ սաստիկ փնստուած են: Վաղուց կտրուած կապիտելի մասի կտորը պահուած է:

Բննութեան ենթարկուեցին գործի համար պատրաստուած նիւթերը՝ աւազ, քար, նոյնպէս և լիովին պատրաստուած կտուրի համար քարէ պլիտաները 400 հատ:

Աւազի յախուժիւնը լաւ է, բայց անհրաժեշտ է ցերեզիախ հետ գործածութեան համար լուանալ:

Պատրաստուած պլիտաները իրանց չափսերով համապատասխանում են տուեալ չափսերին, լաւ տեսակ քարից են, անկիւնների կանոնաւոր մշակութեամբ և հանած շեփղեհներով բոլոր չորս կողմից:

Արձանագրութիւնների վերաբերեալ նկարիչ Թադէոսեանը թէև համաձայն է ենթամասնաժողովի հետ, որ զլիւսւոր զլանի վրայ չը կան հետքեր տաշուածի, միևնոյն ժամանակ կարելի է համարում խորը փորուած արձանագրութիւնների գոյութիւնը ծեփից մաքրուած տեղերում: Նա այս կարծիքը մասամբ հիմնում է նորին գերապատուութեան Բարդուղիմէոս եպիսկոպոսի յայտարարութեան վրայ:

Իսկականի վրայ ստորագրեցին.

Ն. Թադէոսեան, Մարտեոս Եպիսկոպոս, Բաբգէն վարդապետ, Վրթանէս վարդապետ, Հ. Գրիգեփակի, Ա. Կալիքն, Ն. Մաղաթեան, Ռ. Մարտիրոսեան, Է. Ֆրանկ:

Արձանագրութիւն էկսպերտիզայի

Յանձնարարութեամբ տեղական էջմիածնի յանձնաժողովի և ենթամասնաժողովի էջմիածնի վերանորոգութեան Թիֆլիսի մասնաժողովի խառն ժողովի, մենք՝ քանդակագործներ Գ. Ի. Կեպիցով և Մ. Կ. Ֆրանկէ՝ զննեցինք փետրուարի 15-ին այս տարուայ էջմիածնի տաճարի զլանը այն նպատակով, որ պարզաբանենք, թէ արդեօք ծեփը վերացնելու միջոցին ոչնչացուած են ծեփի տակ դանուոյ քարէ զլանի վրայ արձանագրութիւնները: Մանրակրկիտ զննութեան ենթարկելուց յետոյ մենք եկանք այն եզրակացութեան, որ բոլոր արձանագրութիւնները պահպանուած են ամբողջովին և որ, եթէ նոյն իսկ քերուած լինի քարի շերտը, այն աստիճան աննշան (քարի ծակոտիւնների մէջ երևում են ծեփի մնացորդները), որ ոչ մի կերպ չէին կարող լինել ոչնչացուած արձանագրութիւնները, որոնց խորութիւնը հաւասար է 1-ից մինչև 1 1/2 սանտիմէտր:

Գ. Կեպիցով, Մ. Ֆրանկ

էջմիածին, 15 փետր. 1914 թ.

